# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Տեքսուորլդ ՍՊԸ-ն ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-21/21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | տեքսուորլդ | տեքսուորլդ | Համազգեստ՝ տղամարդու: Կիսավերակու (1 հատ). մուգ մոխրագույն անջրանցիկ (անջրաթափանց) կտորից՝ 65-70% բամբակ, 30-35% պոլիէսթեր բաղադրությամբ, 240-250 գր/մ2 խտությամբ: Կիսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, հետ ծալվող օձիքից, գոտկատեղը ձգվող գոտիով և հանվող տաք ներդիրով է, որն ամրացվում է 140-150 սմ երկարությամբ կայծակաճարմանդով (շղթա), բաճկոնին կոճկվում է հանովի արհեստական մորթե օձիք 740-750 գր/մ2 խտությամբ, որի խավի բարձրությունը 10-12մմ՝ կոճկվող 7 օղակներով: Բաճկոնի օձիքին կարվում են 7 հատ 15մմ տրամագծով պլաստմասե կոճակներ: Կիսավերարկուն կոճկվում է 60-65սմ երկարությամբ շղթայով: Գոտու կողային մասերն ունեն 14-20սմ երկարությամբ առաձգական ժապավեններ: Թիկնամասի ու առաջամասի վերին հատվածը 100% բամբակե գործվածքից: Թիկնամասը և լանջափեշերը՝ կրծքամասում կտրվածքով: Լանջափեշերի ներքևի մասում թեք ներկարվում են 16սմ բացվածքով գրպաններ: Առջևի 2 լանջափեշերի վերևամասում՝ կափույրի տակ, ներկարվում են 15սմ երկարությամբ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | շղթայով փակվող գրպաններ, ձախ կողմում՝ ծոցագրպան: Թևքերը երկկարանի են: Ներքևում՝ կարագծերում, անցկացված է էլաստիկ ժապավեն: Կիսավերարկուի թևքերին կարվում են շրջանաձև կպչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80մմ, ձախ թևքին ուսակարից 70մմ ներքև կարվում է տեսչական մարմնի խորհրդանշանը (Տե՛ս նկարագրություն 1), իսկ աջ թևքին՝ ուսակարից 70մմ ներքև կարվում է թևքանշանը (Տե՛ս նկարագրություն 2): Վերնաշապիկ երկարաթև՝ տղամարդու (2 հատ). մուգ մոխրագույն կտորից՝ 67-70% պոլիէսթեր, 30-33% վիսկոզե բաղադրությամբ, 170-180 գր/մ2 խտությամբ: Վերնաշապիկի հետևամասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից, ծալովի օձիքով, կրծքամասում՝ 3 կոճակներով կոճկվող կափույրով, հետևամասը՝ վերին կտրվածքով, թևքերը՝ երկար, 2 կոճակներով կոճկվող թեզանիքներով: Վերնաշապիկի պարանոցից ներքև մշակվում է վրադիր կտոր, որի վրա մշակվում են 3 օղակներ և կարվում 3 կոճակներ՝ 10մմ տրամագծով: Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11սմ երկարությամբ, 2,0սմ լայնությամբ կպչուն ժապավեններ, որտեղ ամրացվում են տեսչական մարմնի տարբերանշանները (Տե՛ս նկարագրություն 3): Ներքևում՝ կարագծերում, անցկացված է էլաստիկ ժապավեն: Վերնաշապիկի թևքերին կարվում են շրջանաձև կպչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ձախ թևքին ուսակարից 70 մմ ներքև կարվում է տեսչական մարմնի խորհրդանշանը (Տե՛ս նկարագրություն 1), իսկ վերնաշապիկի աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև՝ թևքանշանը (Տե՛ս նկարագրություն 2): Տաբատ՝ տղամարդու (2 հատ). մուգ մոխրագույն կտորից՝ 65-70% բամբակ, 30-35% պոլիէսթեր բաղադրությամբ, 240-250 գր/մ2 խտությամբ, ուղիղ ուրվագծով: Գոտին՝ 10 մմ լայնությամբ 5 գոտեմակողերով, գոտեփոկի անցկացման համար կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Կոճկվում է 15 մմ տրամագծով կոճակով, 16 սմ երկարությամբ շղթայով: Կողային գրպանները թեք են՝ 16 սմ բացվածքով: Հետևամասի աջ կողմում ներկարված գրպան՝ 13-14 սմ բացվածքով: Շապիկ կարճաթև՝ տղամարդու |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | (2 հատ). մոխրագույն կտորից՝ 45-47% բամբակ, 45-47% պոլիէսթեր, 6-10% էլաստան բաղադրությամբ, 220-230 գր/մ2 խտությամբ: Շապիկի հետևամասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից, ծալովի օձիքով, կրծքամասում՝ 3 կոճակներով՝ 11սմ տրամագծով կոճկվող կափույրով, թևքերը՝ կարճ, երկակի կարով: Շապիկի ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, ասեղնագործվում է խորհրդանշանը (Տե՛ս նկարագրություն 1), իսկ աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև ասեղնագործվում է թևքանշանը (Տե՛ս նկարագրություն 2): Գլխարկ (1 հատ). մուգ մոխրագույն գլխարկ (կեպի), բամբակ 100%, հետնամասում ամրանում է ճարմանդով: Ջրադիմացկուն, բարձրորակ, խիտ գործվածք է: Առաջնամասում ասեղնագործվում է տեսչական մարմնի խորհրդանշանը (Տե՛ս նկարագրություն 1): Նկարագրություն 1: խորհրդանշան՝ 97 մմ երկարությամբ, 85 մմ լայնությամբ շրջանաձև ոսկեգույն գավազան է, որի վրա ոլորաձև պատկերված է կանաչ օձ: Գավազանի ներքևի մասում՝ երկու կողմերում, V-աձև տեղադրված է ոսկեգույն ցորենի մեկական հասկ: Ձախ ցորենի հասկի ստորին մասում ոսկեգույն տառերով գրված է տեսչական մարմնի ռուսերեն հապավումը՝ «ИОБПП РА», իսկ աջ ցորենի հասկի ստորին մասում անգլերեն հապավումը՝ «FSIB of RA»: Արտաքին կանաչ շրջանագծում ոսկեգույն տառերով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» բառերը: Նկարագրություն 2: թևքանշան՝ շրջանաձև է, 8 սմ շառավղով, կենտրոնում Հայաստանի Հանրապետության դրոշի եռագույնն է պատկերված, իսկ շրջանագիծն իրենից ներկայացնում է «Հայաստան» գրվածքը՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Նկարագրություն 3: տեսչական մարմնի տարբերանշան՝ ուղղանկյուն 10x2 սմ երկարությամբ, վերնաշապիկի ձախ կրծքին գրվում է համապատասխան ստորաբաժանման անվանման հապավում տարբերանշանը, իսկ աջ կողմում՝ կրողի անվան առաջին տառը և ազգանունը տարբերանշանը: Ասեղնագործությունը կատարվում է բարձր խտությամբ թավշյա գործվածքի վրա: Գործվածքի գույներն են՝ կարմիրը, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կապույտը, ծիրանագույնը, կանաչը և ոսկեգույնը: Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը` Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքներիի նմուշները, 1 օրինակից, որից հետո միայն մատակարարել ապրանքները` համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների: Փաթեթավորումը` եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1 լրակազմ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Պահանջվող համազգեստի ձևանմուշները ներառված են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 700-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2021 թվականի հուլիսի 1-ի N 1094-Ն որոշման մեջ: Ծանոթություն` * Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: * Բոլոր ապրանքները մատակարարվելու են ՀՀ ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեում մատակարարի միջոցներով` աշխատանքային օրերին ժամը 09.30-ից մինչև 17.00-ն: * Ապրանքների չափսերն ու քանակները ենթակա են համաձայնեցման Պատվիրատուի հետ, որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-21/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 1 | тексуорлд | тексуорлд | Мужская униформа: Полупальто (1 штука). Изготовлен из водонепроницаемой ткани темно-серого цвета, 65-70% хлопка, 30-35% полиэстера, плотность 240-250 г / м2. Полупальто состоит из юбки, крыльев, складного воротника, на талии есть теплая вставка с натянутым поясом, который усилен молнией (цепочкой) длиной 140-150 см, имеет съемный воротник из искусственного меха плотностью 740-750 г / м2, высота слоя которого 10-12 мм при 7 застегнутых кольцах. На воротник куртки пришиты 7 пластиковых пуговиц диаметром 15 мм. Полупальто застегивается на цепочку длиной 60-65 см. Боковые части ремня имеют резинки длиной 14-20 см. Верх спинки и переда выполнены из 100% хлопка. Спина и юбка имеют наклоны на груди. Карманы с отверстием 16 см на скошенной подошве внизу юбок. В верхней части 2 передних юбок, под форточкой, расположены карманы с цепочкой длиной 15 см, а с левой стороны - нагрудный карман. Крылья двумерны. На крыльях полупальто вшиваются круглые липкие ленты диаметром 80 мм а на левой руке на 70 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | мм ниже лопатки пришит Символ инспектирующего органа (См. Описание 1), а Значок пришивается на 70 мм ниже лопатки (См. Описание 2). Рубашка длинная мужская (2 штуки). Изготовлен из ткани темно-серого цвета, 67-70% полиэстера, 30-33% вискозы, плотность 170-180 г / м2. Спинка рубашки и передняя состоит из 2-х частей, с откидным воротником, застегивающейся пуговицей на груди с 3-мя пуговицами, спинка с верхним разрезом, крылья с длинными застегивающимися пуговицами с 2-мя пуговицами. Под горловиной рубашки делается ткань, на которой проработано 3 кольца, пришиты 3 пуговицы диаметром 10 мм. На груди с правой и левой стороны клейкие ленты длиной 10-11 см и шириной 2,0 см, на которых прикреплены Знаки различия инспектирующего органа (См. Описание 3). Внутри на схемах резинка. Круглые липкие ленты пришиты на рукава рубашки диаметром 80 мм, на 70 мм ниже плеча пришит Символ инспектирующего органа (См. Описание 1), а на правом рукаве рубашки 70 мм ниже. плеча Значок (См. Описание 2). Брюки мужские (2 штуки). Модель из ткани темно-серого цвета, 65-70% хлопка, 30-35% полиэстера, плотность 240-250 г / м2, прямой контур. Ремень с 5 ремнями шириной 10 мм, одна из перемычек для удержания ремня должна располагаться на шве, соединяющем заднюю часть талии. Застегивается на пуговицу диаметром 15 мм и цепочку длиной 16 см. Боковые карманы наклонные, с отверстием 16 см. Расписной карман на правой стороне спины с отверстием 13-14 см. Короткая футболка мужская (2 штуки). Из серого тканья: 45-47% хлопок, 45-47% полиэстер, 6-10% эластановый состав, плотность 220-230 г / м2. Спинка и передняя часть состоит из 2-х частей, с откидным воротником, на груди 3 пуговицы с пуговицей диаметром 11 см, крылья с коротким двойным швом. Символ вышит на левой стороне рубашки, на 70 мм ниже плеча (См. Описание 1), а на правой стороне, на 70 мм ниже плеча, вышит Значок (См. Описание 2). Шляпа (1 штука). Тёмно-серая кепка, 100% |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | хлопок, застегивается сзади на застежку. Это непромокаемая, качественная, плотная ткань. На лицевой стороне вышит Символ инспектирующего органа (См. Описание 1). Описание 1: Символ представляет собой круглый золотой жезл длиной 97 мм и шириной 85 мм, на котором изображена зеленая змея. Внизу стержня с обеих сторон расположен одинарный V-образный колос золотой пшеницы. Русская аббревиатура «ИОБПП РА» написана золотыми буквами внизу левого колоса пшеницы, а английская аббревиатура «FSIB of RA» написана в нижней части правого колоса пшеницы. Слова «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» написаны золотыми буквами во внешнем зеленом круге. Описание 2: Значок круглой формы, радиусом 8 см, в центре изображен трехцветный флаг Республики Армения, а по кругу - надпись «Հայաստան» на армянском и английском языках. Описание 3: Знаки различия инспектирующего органа прямоугольной формы 10x2 см. С левой стороны рубашки написан логотип с сокращением наименования соответствующего подразделения, а с правой стороны - первая буква имени предъявителя фамилия. Вышивка выполнена на бархате высокой плотности. Цвета ткани красный, синий, абрикосовый, зеленый и золотой. Перед доставкой товара Поставщик обязан предоставить образцы товаров, которые будут доставлены с согласия Заказчика, 1 экземпляр, после чего только доставить товар в соответствии с техническими условиями, утвержденными договором и согласованные образцы. Упаковка в картонные трехслойные коробки, 5 комплектов в коробках, ассортимент в прозрачных полиэтиленовых пакетах, по 1 комплекту в одном пакете. На ящиках должны быть указаны название продукта, количество, размер, название производителя, месяц и год выпуска. Образцы необходимой формы включены в Решение Правительства Республики Армения от 1 июля 2021 года № 1094-Н «О внесении |

| | | | |
|---|---|---|---|
| | | | изменений в Решение Правительства РА от 25 июня 2015 года № 700-Н». * Все товары должны быть новыми, неиспользованными. * Доставка всех товаров будут доставлены поставщиком в рабочие дни с 09.30 до 17.00 по адресу г. Ереван, Комитаса 49/2. * Размеры и количество товара подлежат согласованию с Заказчиком, которое предоставляется в течение 10 рабочих дней после подписания договора Заказчиком. |